

ՅԱՆՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ✓

ՅԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Այսօր, երբ բոլոր ազգերը կը փորձեն վերագտնել իրենց կորսնցուցած իրաւունքներու հայ ժողովուրդի պատմութիւնն ալ դրուած է քաղաքակիրթ աշխարհի աչքին առջեւ, որ յստակ կերպով կը բացայայտէ պատմական նշմարիտ իրողութիւններ:

Անցնող դարերու ընթացքին, ի մասնաւորի 20րդ դարուն, հայ ժողովուրդը բազմիցս դիմեց մեծ պետութիւններու՝ իր գոյութեան իրաւունքը հաստատելու ակնկալութեամբ, եւ ի վերջոյ հասկցաւ որ շահամոլութեան օրէնքն է որ կը տիրէ արգարութեան եւ օրէնքի փոխարէն:

Համաշխարհայգին Ա. պատերազմի տարիներուն ազգերը եւ մանաւանդ ժողովուրդները շունեցան անշահախնդիր կեցուածք, այլ եսասիրութեան մղուած լեցցին հայ ժողովուրդը, շիրազործեցին իրենց տուած խոստումները եւ պատճառ հանդիսացան քանակաւոր դարու առաջին ցեղասպանութեան, բնաջնջելով երկու միլիոն հայեր:

Երբ Արեւմտահայաստանի ողջ մնացող հայեր ապաստան կը գտնէին օտար երկրներու տակ, միւս կողմէն ուրս մեծ ժողովուրդը թե ու թիկունք կը կանգնէր հայ ժողովուրդին Արեւելահայաստանը ազատագրելով եւ գայն հոչակելով հայոց ազատ անկախ հայրենիքը: Այսպիսով, հայ ժողովուրդը, որ դարերու ընթացքին բազմիցս ծուստուած է, հասաւ քանակաւոր դար, եւ շնորհիւ սովետական ժողովուրդներու անշահախնդիր նեցուկին, կրցաւ բարգաւաճիլ եւ իր խօսքը ըսել քաղաքակիրթ աշխարհին, գիտութեան եւ արուեստի բոլոր գաւառներու մէջ:

Անցնող 70 տարիներու ընթացքին հայ ժողովուրդը համոզուեցաւ, որ սովետական իրաւակարգը ոչ միայն բերաւ մարդոց հաւասարութիւն, այլեւ յարգելով փոքրամասնութիւններու իրաւունքները, պաշտպան կանգնեցաւ անիրաւուած ժողովուրդներու:

Այդ քաղաքականութեան շնորհիւ ասիական եւ ամերիկեան պետութիւններ ազատութեան տիրացան. այս բոլորը բաւական է արդէն ցոյց տալու ազատութեան եւ խաղաղութեան սիրահար ժողովուրդի մը մեծութիւնը:

Արդարեւ, ներկայիս Սովետական Միութիւնը, որ անելի քան 70 տարեկան է, ազգերու իրաւահաւասարութեան սկզբունքին վրայ հիմնեց նոր իրաւակարգը, որ համաշխարհային պատմութեան մէջ արձանագրեց աննախընթաց նուաճումներ:

Այս բոլորով մէկտեղ, վերակառուցման գաղափարի ջահակիր Սովետական Միութեան Համայնավար կուսակցութեան կեդրոնական Կոմիտէի գլխաւոր քարտուղար Պր. Միխայիլ Կորպաչով այս օրերուն վերատեսութեան կ'ենթարկէ դեռեւս չլուծուած քաղաքական որոց հարցեր:

1920ական թուականներուն Հայաստանէն անջատուած Ղարաբաղն ու Նախիջեւանը դարձան հրատապ հարցեր:

Այսօր արդարութիւնը կը պահանջէ, յաչս աշխարհի ժողովուրդներու, Ղարաբաղի վերադարձը Հայկական Հողերուն:

Հաւատացած ենք որ Միխայիլ Կորպաչովը այսպիսով կը գտնէ լուազոյն եւ անյետաձգելի առիթ մը արտայայտելու այն մարդասիրութիւնը, որ բնորոշ է խորհրդային երկրին եւ վերակառուցման քաղաքականութեան:

Մենք լիայոյս ենք որ Սովետական Համաժողովին մասնակից բոլոր երկիրներու պատուիրակները, հաշուի առնելով փոքրամասնութիւններու իրաւունքը, բարոյական շատ մեծ կարեւորութիւն ունեցող այս հարցին պիտի տան այն արդար լուծումը գոր համաշխարհային խիղճը կը պահանջէ միաձայն: